“Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագիր (ՈՀԱԾ)”

Հայաստանի Հանրապետությունը Եվրասիական Բանկի հակաճգնաժամային հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացնում է «Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագիրը»: Հինգ տարվա իրականացման ժամանակահատված ունեցող ծրագրի ընդհանուր ֆինանսական արժեքը կազմում է 50.0 մլն. ԱՄՆ դոլար:

Ծրագիրը ներառում է հիմնականում Արարատյան դաշտավայրի ու նախալեռնային գոտու մեխանիկական ոռոգումը ինքնահոսի փոխարինող համակարգերի կառուցում, մայր և միջտնտեսային ջրանցքների վերականգնում, որոշ ՋՕԸ-ների ներտնտեսային ոռոգման համակարգերի արդիականացում, ՋՕԸ-ների ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում և ՋՕԸ-ների փորձնական Միության ստեղծում:

Կատարվելիք ներդրումները կհանգեցնեն հետևյալ օգուտների.

(ա) էլեկտրաէներգիայի տնտեսում (տարեկան 14,37 մլն. Կվտ/ժ՝ մոտ 1, 26 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ),

(բ) շահագործման և պահպանման (ՇԵՊ) ծախսերի տնտեսում՝ տարեկան մոտ 0, 67 միլիոն ԱՄՆ դոլար՝ հաշվի առնելով ինքնահոս համակարգերի կառուցումից հետո ՇԵՊ ծախսերը),

(գ) փաստացի ոռոգվող (24.467, 9 հա) և ոռոգման համակարգերի արդիականացման նպատակով կատարված ներդրումների արդյունքում հնարավորություն է ստեղծվում ավելացնել (10.432, 6 հա) հեկտարների զուտ եկամտաբերության աճը:

Վարկային ծրագիրը մեկնարկել է 2016թ. հունիսի 10 –ին: